



«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Ռուս-Հայկական

(Սլավոնական) համալսարանի

Ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Է.Մ. Սանդոյան

«11» հունիսի 2025 թ.

ԿԱՐԾԻՔ

Ռեզա Սոհամադի Բարաթի «Ռիսկերի գնահատման հիմնախնդիրները նախագծերի կառավարման գործընթացում (Թեհրանի քաղաքապետարանի օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված Հ 00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսությունը քննարկվել է Ռուս-Հայկական (Սլավոնական) «Կառավարման և բիզնեսի» ամբիոնի 2025 թվականի հունիսի 11-ի նիստում (արձանագրություն թիվ 50):

Մասնակցում էին՝

Սանդոյան Էդվարդ Մարտինի՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., Սուվարյան Արգիշ Միքայելի՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր, «Կառավարման և բիզնեսի» ամբիոնի վարիչ, Աբրահամյան Վահրամ Գևորգի՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր, Կոջոյան Հռիփսիմե Արմենի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Բաբայան Կարինե Բորիսի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Մոմջյան Մարիամ Բաբկենի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Գինոսյան Քրիստինե Հայկի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Թովմասյան Լուսինե Գառնիկի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Մկրտիչյան Նարինա Գրիգորի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Ավետյան Արման Ալեքսանդրի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ (գրախոսող), Իսկանդարյան Դավիթ Սամվելի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս (գրախոսող), Ամիրջանյան Գոռ Լևոնի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Ղևոնդյան Սաթենիկ Համլետի՝ ավագ դասախոս, Դավթյան Վերա Գասպարի՝ ավագ դասախոս, Կարապետյան Արմինե Եղիշեի՝ դասախոս, Մանուկյան Իզաբելլա Կարենի՝ դասախոս:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տեղական ինքնակառավարման կառույցներում իրականացվող ծրագրերին առնչվող ռիսկերի կառավարման գործընթացը հանդես է գալիս որոշակի առանձնահատկություններով: Նախևառաջ, այդ ծագրերը միտված են հանրության կարիքների բավարարմանը և հիմնականում իրականացվում են քաղաքային իշխանությունների վերահսկողության ներքո: Այս պարագայում, փոխվում են ծրագրային ռիսկերի կառավարման մոտեցումները, հատկապես «Ճարտարագիտություն-գնումներ-շինարարություն» շղթայում, քանի որ տեղական

նշանակության ծրագրերը չեն կարող ունենալ ինչպես խափանման ֆինանսական, այնպես էլ ոչ լիարժեք վերջնարդյունքների ձևավորման ռիսկեր: Ընդ որում, այս ոլորտի շահառուների շրջանակը ոչ միայն ընդարձակ է (կառավարությունից մինչև ազգաբնակչություն), այլև բազմաշերտ է (քաղաքային իշխանություններ, ներդրողներ, միջին և բարձր մակարդակի կառավարիչներ), որոնք փորձում են ոչ միայն ներագդել նախագծերի իրականացման ռիսկերի կանխարգելման վրա, այլև ժամանակին և արժանահավատ տեղեկատվություն ձեռք բերել այդ ուղղություններով, որպեսզի կայացնեն գործընկերային կառավարչական հիմնավոր որոշումներ:

Տեղական ինքնակառավարման համակարգում իրականացվող նախագծերի ռիսկերը բազմաբնույթ ու բազմաշերտ են, ուստի դրանց ճանաչումից հետո անհրաժեշտություն է առաջանում նախևառաջ դրանք խմբավորելու և դասակարգելու ըստ կառավարման առաջնահերթությունների: Որից հետո, կառավարումը իր առջև խնդիր է դնում նախագծային ռիսկերի կանխարգելման արդյունավետ ուղիների իրագործումը, քանի որ նախագծերի իրականացման ռիսկերը ոչ միայն ֆինանսական, այլև ոչ ֆինանսական են (որակյալ աշխատուժի ներգրավում, գործընկերային վստահության աստիճանի ապահովում, հանրային պահանջմունքներին ուղղված որակների ապահովում և այլն): Հետևաբար, տեղական ինքնակառավարման համակարգում իրականացվող նախագծերին առնչվող ռիսկերի կառավարումը պահանջում է առանձնահատուկ մոտեցում, կապված տվյալների հավաքագրման գործիքակազմի ընտրության, հավանական կորուստների չափելիության և գնահատման հնարավորության հետ, ինչն էլ կանխորոշել է հետագոտության արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է Թեհրանի մունիցիպալ համակարգում իրականացվող նախագծերին առնչվող ռիսկերի կառավարման գործիքակազմի բարելավման ուղիների առաջադրումը և դրա հիման վրա նախագծերի կառավարման ռիսկերի մեթոդաբանության մշակումը:

Հետազոտության նպատակի իրագործման համար աստենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Թեհրանի մունիցիպալ համակարգում գործող նախագծերի կառավարման շահառուների շրջանում իրականացնել հարցումներ և հավաքագրված տեղեկատվության հիման վրա բացահայտել ծրագրերի իրագործման ռիսկերը,
- գնահատել Թեհրանի քաղաքապետարանում իրականացվող նախագծերի կառավարման ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը և բացահայտել դրանց կանխարգելիչ գործառնությունները կառավարման ստորին, միջին և բարձր օղակներում,
- վիճակագրական հատուկ մեթոդներով մշակել հարցումների արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը և դրա հիման վրա որոշել նախագծերի իրագործման ռիսկերի կառավարման առաջնահերթությունները,

- կազմել մունիցիպալ համակարգի ենթակառուցվածքների ընդլայնման նախագծերի իրականացման ռիսկերի վարկանիշավորում՝ ըստ դրանց կառավարման գործառնությունների նշանակության,
- մունիցիպալ ծրագրային կառավարման առանձնահատկությունների հիման վրա առաջարկել ռիսկերի կանխարգելման գործողությունների աստիճանակարգ,
- առաջարկել մունիցիպալ համակարգում իրականացվող ենթակառուցվածքների ընդլայնման նախագծերին առնչվող ռիսկերի կառավարման արդյունքների հաշվետվողականության համակարգ,
- նախագծերի կառավարման արդյունքների հաշվետվողականության կազմակերպման հիման վրա նպաստել արտաքին և ներքին շահառուներին ռիսկերի մասնակցային կառավարման գործընթացին մասնակցությանը և վերջիններիս կողմից գործընկերային հիմնավոր կառավարչական որոշումների կայացմանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ըստ ատենախոսի հետազոտության նորույթը Իրանի Իսլամական Հանրապետության մունիցիպալ համակարգում իրականացվող ծրագրերի առանձնահատկություններով պայմանավորված ռիսկերի կառավարման մոդելի մշակումն է: Մասնավորապես:

1. Թեհրանի մունիցիպալ կառավարման շահառուների շրջանում իրականացված հարցումներով և Delphi method-ի կիրառմամբ՝ «ճարտարագիտություն-գնումներ-շինարարություն» EPC շղթայի փոխկապակցված աշխատանքների շրջանակում բացահայտվել են ծրագրերի կառավարման 12 տիպի ռիսկեր և կատարվել է ըստ կառավարման առաջնահերթության դրանց վարկանիշավորում:
2. տեսական հետազոտությունների և MAXQDA ծրագրային փաթեթի կիրառմամբ ծրագրային կառավարիչներից ստացված հարցումների հիման վրա մշակվել են մունիցիպալ ծրագրային կառավարման ռիսկերի գնահատման ուղղություններ Fuzzy Vikor մեթոդաբանությամբ. արդյունքում ըստ 12 վարկանիշային կատեգորիաների բացահայտելով նաև ռիսկերի փոխազդեցությունները:
3. մունիցիպալ ծրագրային կառավարման առանձնահատկությունների հիման վրա առաջարկվել է ռիսկերի կանխարգելման գործողությունների աստիճանակարգ, հնարավորություն ստեղծելով իրականացնելու կառավարչական որոշումներ ըստ բացահայտված մարտահրավերների համապատասխան լուծումների առաջնահերթությունների:
4. առաջարկվել է մունիցիպալ նախագծային կառավարման գործընթացին առնչվող շահառուների հաշվետվական համակարգ, հետադարձ կապ ապահովելով ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր շահեր հետապնդող տեղեկատվություն օգտագործողների միջև, և դրանով իսկ, հիմքեր ստեղծելով ռիսկերի գծով մասնակցային կառավարչական որոշումների համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունում իրականացված ուսումնասիրությունները և ներկայացված առաջարկություններն ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն: Նախագծերի կառավարման ռիսկերի գործոնային շրջանակի հետազոտումը կարևոր նշանակություն ունի ընդհանուր առմամբ մունիցիպալ համակարգում ենթակառուցվածքների բարելավման և ընդլայնման որակական վերջնարդյունքների ձևավորման կառավարչական որոշումների կայացման համար:

Հետազոտության հիմնական արդյունքները կարող են օգտակար լինել նախագծերի կառավարման հիմնահարցերով զբաղվող մասնագետների, ինչպես նաև մունիցիպալ համակարգի ենթակառուցվածքների բարելավման քաղաքականություն իրականացնող պետական մարմինների համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը շարադրված է 139 էջի վրա՝ առանց հավելվածների, և բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից ու հավելվածներից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակն ու հիմնախնդիրները, տրված են առարկան և օբյեկտը, ներկայացված են ուսումնասիրության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Ռիսկերի գործոնները և նախագծերի կառավարումը» գլխում քննարկվել են «Ճարտարագիտություն-գնումներ-շինարարություն» շղթայի գործունեության առանձնահատկությունները նախագծերի կառավարման համատեքստում: Հիմնավորվել է, որ կապալառուն պետք է գործելու ավելի մեծ ազատություն ունենա կիրառվող տեխնիկայի և սարքավորումների ընտրության հարցում և առանձնահատուկ կախվածություն չունենա այլոց գործողություններից և նրանց ժամանակացույցի պլանից: «Ժամանակը» առանձնահատուկ նշանակություն ունի այս տեսակի պայմանագրերում, և կողմերը պարտավոր են դրան հավատարիմ մնալ՝ ստանձնած պարտավորություններին համապատասխան: Հետևաբար, ծրագրի յուրաքանչյուր մակարդակում պետք է քննարկվեն միայն կարևոր և էական դեպքերը, որպեսզի կանխվեն ծրագրի իրականացման գործընթացի հետաձգման ռիսկերը:

Ատենախոսության երկրորդ՝ «Ռիսկերի ճանաչման մարտահարավերները EPC նախագծերի իրականացման ծախսատարության իրականացման շրջանակում» գլխում իրականացվել է նախագծերի կառավարման ռիսկերին առնչվող հարցումների տեղեկատվության վերլուծություն և մշակում: Հիմնական նպատակ է դրվել բացահայտելու և գնահատելու Թեհրանի քաղաքապետարանում իրականացվող ենթակառուցվածքային բարելավումների ծրագրերի ռիսկերն ու մարտահարավերները, ինչպես նաև տրամադրելու EPC նախագծերի արժեքի և ժամկետների կառավարչական նոր լուծումներ: Հաշվի առնելով որակական հարցազրույցների հետ կապված համակարգը, որն ուղեկցվում է թիրախային հարցադրումներով, կատարվել է տվյալների հավաքագրում և դասակարգում: Թեհրանի քաղաքապետարանի ենթակառուցվածքային նախագծերի փորձագետների հետ անցկացված 10

հարցազրույցների հիմքով կազմվել է 269 հարցման սկզբնական ծածկագիր: Ստացված տվյալների նախնական դասակարգումից հետո կողմնորոշումների, նպատակահարմարության և կառավարչական գործառնությունների բնույթի վրա հիմնված բաց կողմնորոշման հասկացությունները բաժանվել են 12 կատեգորիաների՝ հիմնված PMBOK ստանդարտով նախագծի վերահսկման սկզբունքների վրա:

Ատենախոսության երրորդ «Նախագծերի կառավարման ռիսկերի գնահատումը Fuzzy Vikor մեթոդով» գլխում կատարվել է մունիցիպալ նախագծերի ռիսկերի դասակարգում, որի հիման վրա ներկայացվել է ռիսկերի կանխարգելման կառավարչական գործառնությունների իրականացման շրջանակ: Ուսումնասիրությունները ցույց են տալ են տալիս, որ Թեհրանի քաղաքապետարանում նախագծերի իրագործման վերահսկման ու կառավարման ռիսկերի տասներկու մարտահրավերները գնահատվում և չափվում են 5 չափանիշներով: Մունիցիպալ նախագծերի կառավարման տեղեկատվական ապահովման նպատակով առաջարկվել է հաշվետվողականության համակարգ, հիմնված շահառուների հետադարձ կապի վրա: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախագծերի կառավարման հաշվետվողականությունը սահմանափակվում է պատվիրատու-Թեհրանի քաղաքապետարան շրջանակում, որը հնարավորություն չի տալիս ծրագրի իրագործմանը առնչվող մյուս շահառուներին տեղեկանալու կառավարչական միջանկյալ և վերջնական արդյունքների հետ: Իսկ նման տեղեկատվատվության հետադարձ կապով տրամադրման պարագայում շահառուները կարող են ներազդել նախագծերի իրագործման կառավարչական որոշումների կայացման վրա՝ ելնելով ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր շահերի պահանջմունքներից:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Աշխատանքի ներածական բաժնում առկա են լեզվական անհատականություններ, կրկնվող բառեր և ոչ բնական կառուցվածքներ, որոնք դժվարացնում են ընթերցանությունը և ազդում աշխատանքի ընդհանուր ակադեմիական որակի վրա: Ցանկալի կլիներ աշխատանքը վերախմբագրել՝ ուշադրություն դարձնելով քերականական ձևակերպումներին և բարձրացնելով աշխատանքի գիտական արժեքը:
2. Թեև աշխատանքում ներկայացված են ցուցադրական գծապատկերներ և աղյուսակներ, դրանցից շատերը կարիք ունեն վիզուալ ներկայացման վերանայման, քանի որ թույլ չեն տալիս հստակ պատկերացում կազմել ներկայացվող նյութի վերաբերյալ, ինչին ըստ էության միտված են:
3. Աշխատանքում հեղինակը օգտագործում է Նախագծերի կառավարման ինստիտուտի կողմից մշակված փաստաթղթի՝ PMBOK-ի հնացած մոդելը՝ 10 գիտելիքների ոլորտներով և 5 գործընթացային խմբերով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021 թվականին հրապարակվել է դիտարկվող փաստաթղթի 10-րդ խմբագրությունը՝ ցանկալի կլիներ աշխատանքում կիրառել նշված խմբագրության գաղափարախոսությունն ու մոտեցումները:

4. Աշխատանքի տարբեր հատվածներում, գիտական վերլուծություն իրականացնելու շրջանակներում հեղինակը ներկայացնում է բազմաթիվ աղբյուրներ Earned Value Management, EVM-ի և ռիսկերի կառավարման կապի մասին, սակայն հստակ կերպով չի ներկայացնում իր անձնական գիտական դիրքորոշումն այդ հարցերի շուրջ: Կարծում ենք՝ աշխատանքն ավելի կշահեր, եթե հեղինակը ներկայացներ տարբեր հեղինակների և գիտական աշխատանքների շրջանակներում առկա տարբեր մոտեցումները, վերլուծեր դրանց ուժեղ և թույլ կողմերը՝ դրանք մեկնաբանելով աշխատանքի ուսումնասիրության առարկային տեսանկյունից, և ներկայացներ սեփական եզրակացություններն ու գիտական ենթադրությունները: Սա, թերևս, կբարելավի թեմայի գիտական ընկալումն ու կավելացնի աշխատանքի գիտական արժեքը:
5. Աշխատանքի շրջանակներում հեղինակն իրականացրել է բովանդակալից ուսումնասիրություններ, որոնք ունեն բավականին գործնական բովանդակություն և նշանակություն: Կարծում ենք՝ աշխատանքն ավելի կշահեր, եթե գործնականում իրականացված վերլուծությունների և վերջիններիս արդյունքների վերաբերյալ հեղինակը կատարեր գիտական եզրահանգումներ՝ կիրառելով համապատասխան գիտական մեթոդներ: Այսպիսով հնարավորություն կառաջանար ներկայացվող գիտական աշխատանքի միջոցով նպաստել նախագծերի կառավարման ոլորտի գիտական զինանոցի համալրման նոր գիտական նորույթներով և մշակումներով:
6. Աշխատանքի շրջանակներում հեղինակը ներկայացնում է նախագծի կառավարման արդյունավետությունը նկարագրող ցուցանիշներ, որոնք, սակայն, աշխատանքում ներկայացված են զուտ նկարագրողական տեսքով: Կարծում ենք, գիտական աշխատանքում նման դասագրքային բնույթի տեղեկատվության ներկայացումն այնքան էլ նպատակահարմար չէ: Փոխարենը հեղինակը կարող էր գործնական տվյալների հիման վրա հաշվարկած ցուցանիշները մեկնաբանել՝ փորձելով առաջ քաշել դրանցից բխող գիտական եզրահանգումներ, կամ նախագծերի կառավարման բարելավմանն ուղղված առաջարկություններ:
7. 3.2 պարագրաֆում գրանցված և բացահայտված արդյունքները (85-94 էջեր) հիմնված են միջին ցուցանիշների և դրանց դասակարգման վրա, սակայն բացակայում է, օրինակ, կորելացիոն վերլուծություն, որի բացակայությունը թուլացնում է արդյունքների նկատմամբ վստահությունը: Աշխատանքը էականորեն կշահեր նաև SPSS-ի գործիքակազմի կիրառությունից:
8. Աշխատանքում ռիսկերի բացահայտումից և դասակարգումից զատ չեն առաջարկվում դրանց կառավարման որոշակի ռազմավարություններ:
9. Աշխատանքում անդրադարձ է կատարվում շահագրգիռ կողմերի ներգրավվածությանը, սակայն չեն առաջարկվում նրանց միջև հնարավոր կոնֆլիկտների կառավարման կամ շահերի բախման դեպքերի նվազեցման քայլեր կամ գործիքակազմեր, քանզի

համայնքային նախագծերը հաճախ բախվում են տարբեր շահագրգիռ կողմերի դիմադրությանը:

10. Հեղինակն աշխատանքում չի ներկայացնում, թե ինչպես են ռիսկերը տարբերվում նախագծի իրականացման տարբեր փուլերում: Ակնհայտ է, որ կյանքի ցիկլի վրա հիմնված ռիսկերի քարտեզագրումը կբարելավի նախագծի փուլային պլանավորումը: Չեն ներկայացվում նաև նախագծերի իրականացման թույլ կողմերը՝ կախված քաղաքային տնտեսության գործունեության ոլորտից, չեն առաջարկում կառուցվածքային կամ կառավարչական բարեփոխումներ դրանց լուծման համար, ինչը սահմանափակում է առաջարկների գործնական կիրառության հնարավորությունները:
11. Հետազոտության շրջանակում իրականացված հարցման ընտրանքը բավականին փոքր է՝ 40 մարդ:
12. Հետազոտությունը բացահայտում է քաղաքային ծրագրերի կառավարման արդիական, հստակ հիմնախնդիրներ, ինչպես նաև առաջարկում Fuzzy VIKOR-ի և EVM-ի նման ժամանակակից գործիքների ինտեգրում: Այնուամենայնիվ, այն չունի գործնական կիրառության փորձ, ինչը թույլ կտար գնահատել առաջարկի գործնական նշանակությունը և կիրառելիությունը:
13. Չնայած Fuzzy VIKOR գործիքակազմի օգտագործմանը, մոդելը չունի ալգորիթմական կամ մաթեմատիկական հստակ ձևակերպում, որը կնպաստի որոշումների կայացման գործընթացում աջակցության տրամադրմանը:
14. Աշխատանքի 96-րդ և 97-րդ էջերում հեղինակը ներկայացնում է փորձագետների կարծիքների միջև առկա է անհամադրելիություն՝ 0.389, ինչը, ըստ հեղինակի, բավարար է հետազոտության համար, մինչդեռ բավարար ցուցանիշ է համարվում < 0.1 -ը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ռեզա Մոհամմադի Բարաթի «Ռիսկերի գնահատման հիմնախնդիրները նախագծերի կառավարման գործընթացում (Թեհրանի քաղաքապետարանի օրինակով)» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն հետազոտություն է:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են 6 գիտական հոդվածներում:


Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, **Ռեզա Մոհամմադի Բարաթի** «Ռիսկերի գնահատման հիմնախնդիրները նախագծերի կառավարման գործընթացում (Թեհրանի քաղաքապետարանի օրինակով)» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված


Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Նիստի նախագահ՝

Հայ-Ռուսական համալսարանի Ռեկտոր,
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի պրոֆեսոր,
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝

 Է. Մ. Սամոյլով


Հայ-Ռուսական համալսարանի
«Կառավարման և բիզնեսի»
ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝

 Ա. Մ. Սոլովյան

Հայ-Ռուսական համալսարանի
«Կառավարման և բիզնեսի»
ամբիոնի դոցենտ, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

 Ա. Ա. Մվետյան

Հայ-Ռուսական համալսարանի
«Կառավարման և բիզնեսի»
ամբիոնի ավագ դասախոս, տնտ. գիտ. թեկնածու՝

 Դ. Մ. Իսկանդարյան

Հայ-Ռուսական համալսարանի
գիտական քարտուղար,
բան. գիտ. թեկնածու՝

 Ռ. Մ. Կասաբաբովա

